

Յ Ո Ւ Ց Ա Կ

ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՅՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

№ 301

ԿՈՆԴԱԿԱՑ ԳԻՐԳ

«Էջմիածին» ամսագիրը 1950 թվականից սկսյալ հրատարակել է Մայր Աթոռ ս. Էջմիածնի ձեռագրատան ձեռագրաց ցուցակը երեք հերթով.—

ա. 1—101 . . . 1950—52 թթ.
բ. 102—200 . . . 1960—63 թթ.
գ. 201—300 . . . 1964—72 թթ.

Ամսագրի այս համարից հրատարակության ենթ հանձնում ձեռագրատան նոր ստացած ձեռագրերի հերթական չորրորդ ցուցակը, հայագետների լայն շրջանակների օգտագործման համար դյուրություն ստեղծելու նպատակով:

Սույն ձեռագրերը տարիների ընթացքում նվեր են ստացվել մայր հայրենիքի և արտասահմանի մեր բարեպաշտ հայրենակիցներից, որոնց հայտնում ենք Վեհափառ Հայրապետի օրհնությունները և Մայր Աթոռի ձեռագրատան վարչության անկեղծ շնորհակալիքը:

Հանումն Վեհափառ Հայրապետի այս առթիվ դարձյալ սրտագին կոչ ենք ուղղում մեր բոլոր այն հայրենակիցներին և կազմակերպություններին, որոնք ունեն հայերեն ձեռագիր կամ պատառիկ, որպեսզի իրենց լուման մոծեն ի նպաստ հայագիտության, մեր պապերից ժառանգ մնացած ձեռագիրները նվիրելով Մայր Աթոռ ս. Էջմիածնի ձեռագրատան:

Ն. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
(Ձեռագրատան վարիչ)

Թերթերը՝ 135:—Պրակները՝ յուրաքանչյուրը 18-ական թերթից:—Մեծությունը՝ 35×22×1,8 սմ.:—Նյութը՝ գծավոր բարակ դիմացկուն թուղթ:—Կազմը՝ հաստ ստվարաթուղթ:—Պահպանակները՝ սկզբից և վերջից մեկական հասարակ բարակ թուղթ:—Վիճակը՝ բավարար:—Գրությունը՝ միապուն:—Դատարկ թղթերը՝ 40ր, 41ա, 105ա, 134ա—135բ:—Տողերը՝ 32:—Գծումները՝ թուղթից ինքնին գծավոր է գործարանից:—Գիրը՝ շեղագիր (մի քանի տեսակի):—Ձարդագրություն՝ չունի:—Գրիչը՝ Կաթողիկոսի քարտուղարը:—Պատվիրատուն՝ Մկրտիչ Ա. Խրիմյան Հայրիկ, Ամենայն Հայոց կաթողիկոս:—Ժամանակը՝ 1899 թ.:—Վայրը՝ ս. Էջմիածնի վանք:—Ծանոթություն՝ սույն ձեռագիրն ստացված է Հոգևոր ճեմարանի գրադարանից հոգեշնորհ տ. Նարեկ վարդապետ Ծաբարյանի ձեռամբ 1985 թ. հունիսի 13-ին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մատյանը պարունակում է (թթ. 1ա—133բ)՝ Մկրտիչ Ա. Խրիմյան կաթողիկոսի 1899 թ. գրած 1562 կոնդակների ընդհանուր ցուցակը: Կարևոր կոնդակների պատճենի տեքստը տրված է լրիվ կերպով, իսկ զանազան գրությունների, մակագրությունների, ստացականների և հասարակ կոնդակների մասին հիշված է միայն մի տողով, տալով հերթական թվահամարը:

Հետաքրքրության համար ստորև տալիս ենք մի քանի կարևոր կոնդակների վերնագրերը:

Թ. 6բ.—Պատուարժան տեարց անդամաց հոգաբարձության ազգային հիւանդանոցի ս. Փրկչի, հարազատ որդոց Մայր Աթոռոյ, նուիրեմք ողջուն Տիրաւանդ հանդերձ Հայրապետական օրհնութեամբ:

Թ. 13ա.—Ամեն. Պատրիարքի Կ. Պոլսոյ տ. Մաղաքիա Արքեպիսկոպոսի լծակից եղբոր Մերոյ Հայրապետական ողջունի խնդալ ի Տէր:

Թ. 20բ.—Վսեմաշուք Պօղոս Փաշայի Նուբար, հա-

* Ծարուհակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի №№ Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի №№ Ը—Ժ-ից, 1968 թվականի № Լ-ից, 1970 թվականի №№ Դ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից, 1971 թվականի №№ Ե—Ը-ից, ԺԱ—ԺԲ-ից և 1972 թվականի №№ Ա—Բ-ից և Դ-ից:

քաղաքային և հաստատարիմ որդույ Մայր Աթոռույ ա. Էջմիածնի, նուիրենք զմերն Հայրապետական օրհնութիւն, հայցելով զմիջաբարութիւն ա. Հոգոյն Այ ի վերայ համայն վշտացեալ Գերդաստանին Զերոյ: (Կոնդակը գրված է 12 փետր. 1899 թ. Նուբար Փաշայի մահվան առթիվ):

Թ. 26թ.—Առ ամենայն ուխտ Հայաստանեայց եկեղեցույ գտնիցելոց ի Կովկաս, Զեզ հոգեշնորհ փոխանորդացոյ, բարեշնորհ վանահարցոյ, Արծանապատիւ առագ երիցանցոյ, բարեկրօն Քահանայիցոյ, շնորհունակ Սարկաւագացոյ, յարգելի Տանուտեարցոյ և Գիւղապետացոյ, հարազատ որդույ Մայր Աթոռույ Հայրապետական օրհնութեամբ յայտ առնեմք: (Կոնդակը գրված է 3 մարտի 1899 թ. կարգադրելով, որ օգնեն «Ազգագրական հանդես»-ի հրատարակիչ երվանդ Լալայանին, ազգագրական նյութեր հավաքելու գործում):

Թ. 31ա.—Թղլատութիւն հրատարակութեան օրացուցի. Գիտ թիւ. Աղանեանցի:

Թ. 45ա.—Բազմավաստակ և արդիւնաւետ ուսուցչի և ազգային գրաւոր հեղինակի պ. Պերճի Պոռեան հարազատի Մայր Աթոռույ նուիրենք ողջոյն և օրհնութիւն: (Կոնդակը գրված է 5 մայիսի 1899 թ. Պ. Պոռեանի գրական գործունեության քառասունամյա հոբելյանի առթիվ):

Թ. 55ա.—Սինօդի ա. Էջմիածնի: (Կոմիտաս վարդապետին փոխարինարք 200 ռուբլի օգնություն տալու մասին: 8 հունիսի 1899 թ.):

Թ. 78թ.—Պաշտօնատեղի Իշխան Ն. Երկայնաբազուկ Արդուտեանց, հարազատի Մայր Աթոռույ և յաւետ սիրելոյ Մերոյ նուիրենք ողջոյն և Հայրապետական օրհնութիւն: (Սանահին վանքի նորոգության մասին):

Թ. 86թ.—Բարեշնորհ տ. Գարեգին վարդապետի Յովսէփեան, հարազատի Մայր Աթոռույ մատենադարանապետի Մայր Աթոռույ և արիաքան ուսուցչի Հոգևոր ճեմարանի, սորին Հայրապետական ողջոյն և օրհնութիւն: (Կոնդակը գրված է 26 սեպտ. 1899 թ. վարդապետական ակադեմիոյ լանջախաչ շնորհելու առթիվ):

Թ. 92թ.—Ողորմած Տէր. Իվան Լոգինովիչ: (Երկար կոնդակը գրված է 8 հոկտ. 1899 թ. (Նո 1139), Ռուսաստանի Ներքին գործոց նախարարին, փոխանակ ռուսերենի հայ լուսավորչականներին միայն գրաբար լեզվով երդում անել տալու մասին, վկայակոչելով Մակար կաթողիկոսի կարգադրությունը):

Թ. 103թ.—Ողորմած Տէր. Վսեվոլոդ Փետրովիչ: (2որս արքատ հայ աշակերտներին ուսման համար Լազարյան ճեմարան ընդունելու մասին):

Թ. 106թ.—Ամենապատիւ տ. Մաղաքեայ արքեպիսկոպոսի Քաջարթուն Պատրիարքի Հայոց Թիւրքիոյ և սիրելոյ Մերոյ ողջոյն Տիրաւանդ: (Կոնդակը գրված է 6 նոյեմ. 1899 թ. Խորեն արք. Աշըգյանի մահվան լուրն ստանալու առթիվ):

Թ. 109ա.—Նահապետիկ յաշխատար յանդաստանի կրթութեան հայ մանկտոյ և բազմաշատ Հօրի ի գրական ասպարիզի, Ծերունագարի բարեկամի Մեղ. և սիրելոյ պ. Մատթէոսի Մամուրեան,

հարազատ որդույ Մայր Աթոռույ բազմապի ի Մեծ ողջոյն շատ հանդերձ Հայրապետական օրհնութեամբ (Օրհնության կոնդակը տրված է 8 նոյեմ. 1899 թ., իր ունեցած ուսուցչական և խմբագրական երկարամյա գործունեության առթիվ):

Թ. 126ա.—Մեծարգոյ Տեսչի Լազարեան ճեմարանի արեւելեան լեզուաց, որ ի Մուկուայ ուսուցչապետ պ. Գրիգորի Խալաթեան, հարազատ որդույ Մայր Աթոռույ նուիրենք ողջոյն հանդերձ Հայրապետական օրհնութեամբ: (Նո 1506 կոնդակը գրված է Գրիգոր Խալաթեանի «Գիրք Մնացորդաց»-ի հրատարակության առթիվ):

Թ. 127ա.—Գերագին ուսուցչապետի արքայական համալսարանի ի Բերլին Տիար Օսկարայ Ֆլաշեր Բրիտտոսաւանդ ողջոյն հանդերձ Հայրապետական Մեր օրհնութեամբ: (Շնորհակալության և օրհնության կոնդակ—Նո 1508, 23 դեկտ. 1899 թ.—գերմանացի ուսուցչապետին՝ Կոմիտաս վարդապետին նրա մոտ երեք տարի սովորելու և Էջմիածին վերադառնալու առթիվ):

ՀԻՇՆԱՍԱԿԱՐԱՆ

(Կազմի վրա) Մայր Մատենան Կոնդակաց 1899 ամի:

ՀԻՇՆԱՍԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Սկզբի պահպանակի վրա) 1899 թ., Նո 20, Նո 209:

Թ. 189թ.—Համարակալված հարյուր լեռնուն լեռեք (189) թերթ, 31-1-1930 թ., Խ. Ա., 28-11-1899 թ., 183 թ.:

Նո 302

ԿՈՆԴԱԿԱՑ ԳԻՐԸ

Թերթերը՝ 158 (1ա+157):—Պրակները՝ յուրաքանչյուրը 16-ական թերթից (բացառապես Բ պրակը հավելվածական 4 թերթ ունի):—Մեծությունը՝ 84,7×21,6×1,5 սմ.:—Նյութը՝ գծավոր քարակ դիմակուն թուղթ:—Կազմը՝ հաստ սովորաբար:—Պահպանակները սկզբից և վերջից մեկական հասարակ քարակ թուղթ:—Վիճակը՝ բավարար:—Գրությունը՝ միապոյն:—Դատարկ թղթերը՝ 1ա, 1բ, 147բ—157բ:—Տողները՝ 30:—Գծումները՝ թուղթին ինքնին գծավոր է գործարանից:—Գիրը՝ շեղագիր (մի քանի տեսակի):—Ձարդագրություն՝ չունի:—Գրիչը՝ կաթողիկոսի քարտուղարը:—Պատվիրատուն՝ Մկրտիչ Ա. Խրիմյան Հայրիկ, Ամենայն Հայոց կաթողիկոս:—Ժամանակը 1900 թ.:—Վայրը՝ ա. Էջմիածնի վանք:—Մանդություն՝ սույն ձեռագիրն ստացված է Հոգևոր ճեմարանի գրադարանից հոգեշնորհ տ. Նաբեկ վարդապետ Եաքարյանի ձեռամբ 1965 թ. հունիսի 18-ին:

ԲՈՎԱՆՆԱԿԱՎՈՒԹՅՈՒՆ

Մատյանը պարունակում է (թթ. 1ա—147ա) Մկրտիչ Ա. Խրիմյան կաթողիկոսի 1900 թ. գրած 1577 կոնդակների ընդհանուր ցուցակը: Կարևոր

կոնդակների պատճենի տեքստը տրված է լրիվ կերպով, իսկ զանազան գրությունների, մակագրությունների, ստացականների, հասարակ կոնդակների մասին հիշված է միայն մի տողով, տալով թվահամարը:

Հետաքրքրության համար ստորև տալիս ենք մի քանի կարևոր կոնդակների վերնագրերը:

Թ. 3բ.—Դպրապետի Մայր Տաճարի և Էջմիածնի և հարազատի Մեծի Աթոռյան Ծնորհագրող տ. Կոմիտաս վարդապետի Հայրապետական օրհնություն և գոհունակություն: (Կոնդակը գրված է 15 հունվարի 1900 թ. վարդապետական ակամակուտ լանջախաշ շնորհելու առթիվ):

Թ. 5բ.—Մեծապատի պարունաց Գործադիր Ժողովը Հայ-լսարան ընթերցատան Եգիպտոսի որ ի Գահիրե և անդամոց նորին, հարազատ որդւոց Մայր Աթոռոյս ողջոյն և Հայրապետական օրհնութիւն: (Կոնդակը գրված է 20 հունվարի 1900 թ. ընթերցատան ունեցած ազգօգուտ գործունեության առթիվ):

Թ. 7բ.—Հայկազուն հարազատ որդւոց Մերոց բնակելոց ի Հնդկիս, Ջեզ, որ տարագրել ի ծոցոյ Հայրենեաց բնակելալք էք առ ափն Գանգէսի և ի կղզիս հեռաւորս, սրբանուէր Քահանայիցոյ, Ծնորհունակ Դպրացդ և Կղերիկոսացդ, հաւատարիմ Երեցփոխանացդ և Գանձապետացդ, Ածաւէր և յարգելի Վաճառականացդ և Հոգաբարձուացդ, Ալեգարդ Նախապետաց տանց և օրհնելալ Ծերունեացդ, միւր և գործօն երիտասարդացդ, ջանաւէր ուսանողացդ, պսակ արանց և հաւատաւորեան տանց, ժրագլուխ և համեստափայլ Տիկնանց, պարկեշտաւուն օրիորդաց և համայն ի Քրիստոս հաւատացեալ որդւոցդ Մօրս լուսոյ Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի ընդ որոյ հովանեաւ կայք, մնայք ի լուսարար վարդապետութեան Սրբոյ Հօրն Մերոյ Գրիգորի քաղաքաշար Նախատակի և Առաքելապանձ Հայրապետի, ողջոյն և օրհնութիւն յԱթոռակալէս ընդհանրական Մեծի Աթոռոյս հանուրց Հայաստանեայց: (Երկար այս կոնդակը գրված է 24 հունվարի 1900 թ. Նոր Ջուղայի և Հնդկաստանի թեմակալ առաջնորդ Մաղաքիա եպիսկոպոսի միջոցով Ջուղայի և Ամենափրկչան վանքում կենտրոնական դպրանոց-կղերանոց բացելու առթիվ հնդկահայոց նյութական օժանդակությունը խնդրելու մասին):

Թ. 10բ.—Հայկազուն հարազատ զաւակաց Մերոց բնակելոց ի Տէրութեան Ռումանիոյ, Արժանապատիւ Աւագ Երիցանց, Բարեկրօն Քահանայից, Յարգելի Հոգաբարձուած և Թաղական Խորհրդոց և համայն դասուց հաւատացեալ որդւոց Ս. Հօրն Մերոյ Գրիգորի Լուսաւորչի, ողջոյն և օրհնութիւն յԱթոռակալէս Մեծի և ընդհանրական Աթոռոյս Ս. Էջմիածնի: (27 հունվարի 1900 թ. չորս էջանոց երկար կոնդակը գրված է Եվրոպայի վիճակի այցելու հովիվ նորընծա Գեորգ եպիսկոպոս Ութուջյանին՝ Ռումինիոյ հայկական գաղութի կողմից չընդունվելու առթիվ):

Թ. 12բ.—Հայկազուն հարազատ զաւակաց Մերոց բնակելոց ի Տիրախնամ վիճակն Ծամախոյ, ի Ծա-

մախի, ի Բագու, ի Դէրբէնդ, ի Ղուբալ և ի գիւղաքաղաքս և ի գիւղօրայս, Ծնորհագրող վարդապետաց և վանահարց, Արժանապատիւ Աւագ Երիցանց, Սրբանուէր Քահանայից, Ծնորհունակ տարկաւագաց, դպրաց և համայն դասուց Եկեղեցականաց, Մեծապատիւ Վաճառականացն և աստիճանաւորաց, հաւատարիմ Գանձապետաց և Երեցփոխանաց, աշխատաւէր երիտասարդաց, Յարգելի արհեստաւորաց, քրտնաջան Երկրագործաց և մշակաց, բարեպաշտութի Տիկնանց, Համեստափայլ օրիորդաց, ծերոց և տղայոց, երիտասարդաց և կուսանաց և ամենայն չափու հասակի ի Քրիստոս հաւատացեալ որդւոց Մօրս Ս. Էջմիածնի, որ սնելալք և զարգացեալք էք, ի ճշմարիտ վարդապետութեան և յուղափառ դաւանութեան Ս. Հօրն Մերոյ Գրիգորի Առաքելապանձ Հայրապետի, ողջոյն և օրհնութիւն յԱթոռակալէս Ս. Գահին Արարատայ: (28 հունվարի 1900 թ. չորս էջանոց երկար կոնդակը—որ խրատական հիմանքի մի գիր է, ուղղված թեմի մարդկանց, երիտասարդներին, տիկիներին և օրիորդաց, ամուսնական և այլ հարցերով—գրված է թեմակալ առաջնորդի՝ Կարապետ եպիսկոպոսի մահվան և նոր առաջնորդի՝ Եսայի արքեպիսկոպոսի նշանակման առթիվ):

Թ. 17բ.—Օգոստոսփառ Թագաւոր, Ամենաողորմած Տէր. Ի բարձրագոյն բարի հայեցողութիւն Կալսերական Մեծութեան Ջերոյ արկանէ զամենահպատակ խնդիրս խոնարհ ծառայ Յի Քի, Ծայրագոյն Պատրիարք Կաթողիկոսն Ամ Հայոց Ս. Մկրտիչ: (Սա գրված է 10 փետրվարի 1900 թ., համար չունի և հանդիսանում է Խրիմյան Հայրիկի ամենաերկար կոնդակներից մեկը, եթե ոչ ամենաերկարը, ունենալով 17 էջի ծավալ և ուղղված է օրվա Ռուսական ինքնակալին: Կոնդակը գրված է Հայ Եկեղեցու անդամների ամուսնական և ամուսնալուծական գործերի, ինչպես նաև այդ հարցերի վերաբերյալ Հայ Եկեղեցու նախօրոք ընդունած կանոնների մասին):

Թ. 49ա.—Գերապատիւ Տէր Գեորգ Ս. Արքեպիսկոպոսի վիճակաւոր Առաջնորդի թեմին հայոց Վրաստանի և Իմերեթի. Նախագահի հոգաբարձութեան Ներսեսեան հոգևոր դպրանոցի հայոց Տըվիւնաց և պատուարժան Տեարց անդամոց նոյն հոգաբարձութեան հարազատ որդւոց Մայր Աթոռոյս նուերի ողջոյն Յիսուսաւանդ հանդերձ հայրապետական օրհնութեամբ: (Օրհնության կոնդակը գրված է 8 մայիսի 1900 թ. Ներսիսյան վարժարանի 75-ամյա հոբելյանի առթիվ):

Թ. 73ա.—Նորին Գերազանցութեան Ընդհանուր Հիւպատոսի Օսմանեան պետութեան ի Տիֆլիս: (Գրված է 17 հունիսի 1900 թ. Թուրքիայից եկած հայ գաղթականների ամուսնության վերաբերյալ):

Թ. 78բ.—Ամենապատիւ Պատրիարքի Հայոց Թուրքիոյ Ս. Մաղաքիա Սրբ. Եղբօր Մերոյ և հարազատի Ս. Աթոռոյս նուիրեմք ողջոյն և օրհնութիւն: (Կոնդակը գրված է 28 հունիսի 1900 թ. Էջմիածնի ճեմարանում սովորելու համար տաճկահայ ուսանողության երթելի հարցի մասին):

Թ. 91ա.—Միաբանի Մ. Աթոռոյս Ծնորհափայլ

վրդայ. ի Հայրապետական օրհնությունը լայն առնեմք: (Կոնդակը գրված է 27 օգոստոսի 1900 թ. առաջիկա սեպտեմբեր ամսին պարսից Շահնշահի՝ Էջմիածին այցելության կապակցությամբ):

Թ. 97ա.—Արժանապատիւ Տ. Մամբրէ քահանայի վարդապետն, Փոխանորդ Տեղապահի առաջնորդութեան Հայոց Եպիսկոպոսի, հարազատ որդւոյ Մայր Աթոռոյս, ողջոյն և օրհնութիւն Հայրապետական: (2րդ էջանոց երկար կոնդակը գրված է 30 սեպտ. 1900 թ. երկու ամսիսինների միջև ծագած բարոյական վեճի մասին):

Թ. 106բ.—Նորին Բարձրութեան Սադրազամին պարսից. Վսեմախալ Տէր: (Գրված է 10 հոկտեմբերի 1900 թ. պարսկահայերի վերաբերյալ մի քանի հարցերի մասին):

Թ. 121ա.—Նորին Պաճառապալտութեան Տ. Կառավարչապետի քաղաքական մասին Կովկասու Իշխան Գրիգորի Սերկէլէլիշ Գալիցիցի: (Գրված է 11 նոյեմբերի 1900 թ. հայտնելով, որ պարսից Շահը իրեն՝ կաթողիկոսին շնորհել է առաջին աստիճանի Ապոլոնի և Արեգակի ակաճակոտ շքանշանը):

Թ. 137ա.—Ամենապատիւ Պատրիարքին Առաքելական Աթոռոյն Ս. Երուսաղէմի Տ. Յարութին Ս. Արք-Եպիսկոպոսի հարազատի Մ. Աթոռոյս և յաււտ սիրելւոյ Մերոյ խնդալ ի Տէր: (Կոնդակի թվականը չի նշված, թվահամարն է 1350: Սկզբում հինգ տող գրված է արձակ, սակայն կոնդակի շարունակությունը—25 տող—գրված է ստանալուրի ձևով: Հազվադեպ պատահող մի կոնդակ է սա):

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

(Կազմի վրա) Մայր Մատեան Կոնդակաց 1900 ամի:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Սկզբի պահպանակի վրա) 1900 № 21, № 210:
Թ. 147բ.—Համարակալված է հարյուր քառասունյոթ (147) թերթ: 31 Նի 4.1. 30 թ., ճիշտ 147 էջ, 26-11-1969 թ.:

№ 303

ՈՏԱՆԱՌՈՐՆԵՐ

Թերթերը՝ մոտավորապես 26:—Պրակները՝ անհայտ:—Մեծությունը՝ մոտավորապես 14,5×9,5 սմ. յուրաքանչյուր թերթի չափերը:—Նյութը՝ խումացած և կտրատված հաստ թուղթ:—Կազմը՝ քայքայված լաթակազմ:—Պահպանակները՝ հասարակ թղթակտորներ կազմած:—Վիճակը շատ վատ:—Գրությունը՝ միապուշ:—Տողերը՝ 18:—Գծումները՝ ճնշումով:—Գիրը՝ մուրգիր:—Ջարդագրությունը՝ չունի:—Գրիչը՝ անհայտ:—Պատվիրատուն՝ անհայտ:—Ժամանակը՝ 17-րդ դար:—Վայրը՝ անհայտ:—Ծանոթություն՝ ստացված է նվերներին թեմերից: Ուսանավորների սույն ձևագիր թերթերը կազմած են իրարու վրա անկանոն կերպով և մի մեծ տպագիր Մաշոց գրքի սկզբի պահպանակ են կազմում: Թերթերից մի քանիսը կեսից կտրատված են, մյուսները

մեծապես վնասված, միայն շատ քչերն են, որ լրիվ պահպանված են:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նմուշի համար տրվում է պահպանված մի էջի տեքստը, որ հանգավոր է և վերջանում «Ն» տառով: Այս ձևով են գրված մնացյալ բոլոր էջերը:

Մահմետականքն կորընչի	ն.
տրք անարգեն գնջան խաշի	ն.
Երկըրպագութն ի քեզ պարծի	ն.
և խաշակցեալքն քերկրեսցի	ն.
Իսկ մեղսաւերքն թախանձի	ն.
որք ծուլութեամբ զկեանս անցուցի	ն.
Հապտերք կուսից պայծառ վատի	ն.
որք զիղն յառաջ պատրաստեցի	ն.
Իսկ յիմարքն շիջանի	ն.
որք անագան զընել գնացի	ն.
Յորժամ Հայր և Սուրբ Հոգի	ն.
ընդ քեզ երկիր խոնարհեսցի	ն.
Որպէս տեսեալ Դանիէլի	ն.
ըզհինաւորքն և միշտ էի	ն.
Ջի արարածք արժանացի	ն.
յայնժամ տեսեանն երբեակ անձի	ն.
Ի վկայել քեզ միածնի	ն.
ըստ Յորդանան և ի լերին	ն.

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Տպագիր Մաշոցի 14բ էջում գրված է):

...և սոյնոյ գրոյս թույն վերստին արձանացուցք որդ ՌՄԷ թուականութեանն և ամի ՏՃ. 1751:

Ապիրատ ծոյ. Սրապիոն Էրեցս որ ևմ յերկրէն Երևանու, ի միալէն Մաղկունձորու, ի գիողէն Գառնեղուս, ի մեծ ազգէ որ ևմ Շխեցոնցէ, պապն իմ Տէր Արիստակէսն, հայրն իմ Տէր ըՍտեփաննոն որժամ եկաց ի գիողս այս որ գ գոշի Բաքոյինն, օրհնեալ քիրականայ ժողովորդեան մէջն թանկութիւն էր. լիտրն ժ 2(ա)հի, սորանց մէջն Կառարիցանք Աստուած իրեանցն շէն ու հաստատուն...

№ 304

ՉԱՓԱԲԵՐԱԿԱՆ ՄՍՏԵՄԱՆ

Թերթերը՝ 208:—Պրակները՝ յուրաքանչյուրը 12-ական թերթ, կա որ պակաս է:—Մեծությունը՝ 33×21,6×2,3 սմ.:—Նյութը՝ խումացած բարակ կապտաւուն թուղթ:—Կազմը՝ հաստ ստվարաթուղթ, առջեվինը կա, իսկ կոնակինը կորել է:—Պահպանակներ՝ չունի:—Վիճակը՝ քայքայված, շատ վատ, վերջում թերի:—Գրությունը՝ յոթ պուճակի վրա:—Դասարկ թղթերը՝ կան բազմաթիվ դատարկ էջեր:—Տողերը՝ անկանոն, 20—30 տող:—Գծումները՝ չունի, գրությունն անկանոն է:—Գիրը՝ շեղագիր:—Ջարդագրությունը՝ չունի:—Գրիչը՝ գրել են զանազան քահանաներ:—Պատվիրատուն՝ Իգդիրմավա գյուղի եկեղեցին:—Ժամանակը՝ 19—20-րդ դարեր:—Վայրը՝ Իգդիրմավա գյուղ:—Ծանոթություն՝ ձևագիր ծխամատյանն ստացված է Հոգևոր ճեմարանի գրադարանից 19 հոկտ. 1965 թ.:

(Շարունակելի)